



Քովիդ-19 համավարակը մեզ հիշեցրեց, որ մենք բոլորս գլոբալ մարտահրավերների առաջ կանգնած մարդկային հասարակության մի մասն ենք:

<<OneShared.World>>-ը տարբեր մշակույթների, համայնքների, էթնիկ խմբերի, կազմակերպությունների, սուբյեկտների, կառույցների, սերունդների և ազգերի հետհամագործակցող շահագրգիռ անձանց լայնածավալ շարժում է, որի նպատակն է ապահովել ավելի բարեկեցիկ ապագա ողջ մարդկության և մեր ընդհանուր տան՝ երկիր մոլորակի համար:

Մենք ձգտում ենք նպաստել մարդկանց ազատ կամարտահայտմանը՝ որպես մեր համընդհանուր հնարավորությունների կարևոր օղակ, ինչը շոշափելիորեն կնպաստի մեր ընդհանուր կարիքների բավարարմանն ուղղված քայլերին:

Միացի՛ր մեզ: Ստանձնի՛ր քո բաժին պատասխանատվությունը:

Ես պարտավորվում եմ

1. Աջակցել կանխատեսող, կանխարգելիչ և արձագանքող ենթակառուցվածքի ստեղծմանը՝ գոյություն ունեցող ընդհանուր սպառնալիքներից մեզ պաշտպանելու համար:
2. Ապահովել, որպեսզի մեզանից առավել թույլերը կարողանան վայելել նույն հիմնարար ազատությունները, ինչ նշանավորները և հզորները, որ մեր ընդհանրությունները առավել կարևորվում են մեր միջև առկա նշանակալի տարբերությունների համատեքստում, և մենք բոլորս կարող ենք ապրել հավասարապես արժեքավոր և արժանապատիվ կյանքով:
3. Ուղղակի և անուղղակի համագործակցել համայնքների, կազմակերպությունների, սուբյեկտների և ազգերի հետ՝ պաշտպանելու մեզ և մեր ընդհանուր տունը:
4. Ստեղծել անվտանգ և կայուն գլոբալ միջավայր մեր մոլորակի բոլոր տեսակների և էկոհամակարգերի համար:
5. Երաշխավորել բոլորի, այդ թվում երեխաների առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը և ապահովել նրանց համար պատշաճ կրթություն, առողջապահություն և անվտանգություն:
6. Աջակցել գեղարվեստական արտահայտչամիջոցների բոլոր դրսևորումներին, որոնք կարող են տարբեր մշակույթների միջև ձևավորել կապեր, հարգանք և հաղորդակցում:
7. Նպաստել մարդկային փոխհարաբերությունների խթանմանը՝ փոխադարձ ուշադրության, հարգանքի, կարեկցանքի և բարության միջոցով:
8. Գործել հնարավորությունների առավելագույն չափով՝ այս սկզբունքների իրականացման համար:

Ավելի պայծառ ապագայի հույսով՝ մենք հրավիրում ենք Ձեզ հանձնառություն ստանձնել և միանալ մեր համընդհանուր շարժմանը:

Անուն՝

Ազգանուն՝

Երկիր՝

Կազմակերպություն՝

Պաշտոն՝

Էլեկտրոնային հասցե՝

(Ծանոթագրություն: Շարունակելով՝ դուք համաձայնվում եք ստանալ Էլեկտրոնային նամակներ: Մեր Գաղտնիության Երաշխավորման Քաղաքականությունը կպաշտպանի Ձեր տվյալները և կբացատրի՝ ինչպես կարող եք դրանք օգտագործել):

Շուտով դուք կհրավիրվեք հատուկ արշավների, քանի որ մենք ձգտում ենք հասնել վերը շարադրված սկզբունքներին: Դրանցից առաջնայիններից է մեծացնել մեր հնարավորությունները համաշխարհային առողջապահական համակարգում՝ ի շահ բոլորի և մշակել շտապ օգնության գործողությունների պլան բնակչության առավել խոցելի հատվածին աջակցելու համար, քանի որ Քովիդ-19 համավարակը, ամենայն հավանականությամբ, առաջիկա ամիսներին կտեղաշարժվի դեպի Հարավային կիսագունդ:

Կոչ ենք անում տարածել այս խոսքերը և միանալ մեզ՝ մեր ընդհանուր երազանքը իրականություն դարձնելու համար:

Միասնական մարդկություն: Ընդհանուր էկոհամակարգ: Մեր ուժը մեր միասնությունն է: